ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«01» 12 2023թ.
No 01 0776/01-12-2023

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ
ՋԱՆԻԿ ՍԵՎՈՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, գ. Շահումյան, Գայի 8
էլ. հասցե՝ sevoyanjanik@gmail.com, հեռ. +374 94 80 00 59)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Սևոյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով** կամ **Պատվիրատու**) և «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ **Կատարող**) միջև 2023 թվականի հուլիսի 11-ին ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների (այսուհետ նաև՝ **Ծառայություններ**) մատուցման նպատակով կնքվել է թիվ «ՄՊՀ-ԳՀԾՁԲ-23/31» պայմանագիրը (այսուհետ նաև՝ **Պայմանագիր**):

Պայմանագրով Կատարողը պարտավոր է իրականացնել Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) սպասարկումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Վերոգրյալից հետևում է Կատարողի պարտավորությունը Ծառայությունը մատուցելու օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով:

Այսպես, Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ով սահմանված «Տեխնիկական բնութագիր – Գնման ժամանակացույց»-ի համաձայն՝ Կատարողը պետք է ապահովի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով սահմանված անձնական տվյալների պաշտպանությունը և գաղտնիությունը, պահպանի Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները, այդ թվում՝ Պատվիրատուի ծառայողական, բանկային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները, չհրապարակի կամ այլ կերպ երրորդ անձանց համար հնարավորություն չստեղծի ծանոթանալու դրանց:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուի և Կատարողի միջև 2023 թվականի հուլիսի 11-ին կնքվել է նաև Գաղտնիության համաձայնագիր (այսուհետ նաև՝ **Համաձայնագիր**), որի 2.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է չհրապարակել Պատվիրատուի կողմից տրամադրված և Համաձայնագրի 1.1 կետով սահմանված օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը և այն օգտագործել բացառապես Պայմանագրով սահմանված նպատակի համար, այն է՝ իրականացնել Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգի սպասարկումը:

Համաձայնագրի 2.1.3 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկությունը տրամադրել միայն այն աշխատակիցներին, ում աշխատանքային գործառույթներն ընդգրկում են տրամադրվող տեղեկության օգտագործումը: Կատարողը պարտավորվում է ապահովել աշխատակիցների կողմից վերոնշյալ տեղեկության գաղտնիության պահպանումը:

Համաձայնագրով սահմանված են գաղտնիք պարունակող տեղեկատվության և գաղտնիք պարունակող տեղեկատվության հրապարակման հասկացությունները, որոնք են.

1.1. Գաղտնիք պարունակող տեղեկատվություն՝

1.1.1. բանկային, հարկային, առևտրային (այդ թվում՝ Կատարողին տրամադրված ծրագրային փաստաթղթերը, հասկացությունները, գրառումները, նախագծերը, ալգորիթմները և այլ փաստաթղթերը) կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություն,

1.1.2. անձնական տվյալներ պարունակող տեղեկատվություն, կամ

1.1.3. օրենքով պահպանվող այլ գաղտնիք հանդիսացող տեղեկություն:

1.2 Բացառություն է կազմում այն տեղեկատվությունը, որը

ա. համընդհանուր հայտնի է կամ հասանելի հանրությանը կամ դառնում է այդպիսին առանց խախտելու սույն Համաձայնագիրը,

բ. հայտնի է Կատարողին մինչև Պայմանագրի կատարման նպատակով տվյալ տեղեկատվությունը պարունակով բազաներին հասանելիություն ստանալը,

գ. ձեռք է բերվել Կատարողի կողմից այլ աղբյուրներից:

1.3 Օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկատվության հրապարակում՝ գաղտնիք պարունակող տեղեկատվության օգտագործում ոչ ծառայողական նպատակներով, տարածում, բացահայտում, փոխանցում, հաղորդում, տրամադրում, առաքում, ինչպես նաև որևէ ձևով մատչելի դարձնելը երրորդ անձանց կամ այն անձանց, ովքեր այդպիսի տեղեկություններին առնչվելու թույլտվություն չունեն:Վերոգրյալից հետևում է Կատարողի, այդ

թվում՝ աշխատակիցներին ներգրավելու և տեղեկատվությունը վերջիններիս հասանելի դարձնելու դեպքում, գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանման պարտականությունը: Ընդ որում, գաղտնիք պարունակող տեղեկատվության հրապարակումը ներառում է նաև այն ցանկացած եղանակով երրորդ անձանց հասանելի դարձնելը:

Մինչդեռ Կատարողի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական խախտումներ, մասնավորապես.

1. Հանձնաժողովը Ծառայության մատուցման շրջանակում առաջացող խնդիրների հաշվառմամբ Կատարողի ռեսուրսների և հնարավորությունների գնահատման նպատակով հարցում է հղել Կատարողին՝ ծառայությունների մատուցման հնարավորությունների վերաբերյալ՝ պահանջելով ներկայացնել Կատարողի աշխատակիցների անուն, ազգանունները՝ մանրամասն նկարագրելով յուրաքանչյուրի կողմից իրականացվող աշխատանքներն ու գործառույթների բաշխվածությունը: Կատարողը հայտնել է, որ աշխատանքների կատարման համար ներգրավված է համակարգող, ծրագրային մասնագետ (այդ թվում նաև գիշերային հերթափոխով), տվյալների բազայի մասնագետ: Կատարողը հրաժարվել է ներկայացնել աշխատակցիների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:

Նման պայմաններում Հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԳԳ/964-2023 գրությամբ դիմել է Պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ **Կոմիտե**) Կատարողի աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով: Մինչդեռ Կոմիտեն 2023 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 7414 գրությամբ հայտնել է, որ Կատարողը գրանցված աշխատակիցներ չունի:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն ունի բավարար հիմքեր արձանագրելու, որ Կատարողի կողմից խախտվել է Պատվիրատուի կողմից տրամադրված և Համաձայնագրի 1.1 կետով սահմանված օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկատվության պահպանման պարտավորությունը:

2. Կատարողի կողմից Ծառայության մատուցումը, ի թիվս այլնի, ներառում է տեխնիկական աջակցություն և SS խորհրդատվություն, Համակարգում ի հայտ եկած սխալների վերացում և շտկում, խնդիրների լուծում, Համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ, թերությունների և միջադեպերի կարգավորում 24 ժամվա ընթացքում, ինչպես նաև փոփոխությունների (այդ թվում՝ ընթացակարգերում օրենսդրական փոփոխությունների) թվայնացման և ավտոմատացման համար անհրաժեշտ ծրագրային թարմացումների իրականացում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Կատարողին են տրվել համապատասխան առաջադրանքներ, որոնք վերջինիս կողմից նշվել են որպես կատարված: Մինչդեռ բազմաթիվ առաջադրանքներ փաստացի չեն կատարվել կամ կատարվել են էական թերություններով՝ միաժամանակ Համակարգում առաջացնելով Հանձնաժողովի բնականոն գործունեությունը խաթարող լրջագույն այլ միջադեպեր և խնդիրներ (ցանկը կցվում է):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի

համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2-րդ մասի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ողջ վերոգրյալից հետևում է, որ Կատարողը թույլ է տվել Պայմանագրի էական խախտումներ՝ մատուցել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին անհամապատասխան Ծառայություն, ինչպես նաև խախտել է Պայմանագրով և Համաձայնագրով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանման պահանջները, որի հաշվառմամբ՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք նաև, որ Կատարողը Պայմանագրի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն պարտավորվում է վճարել տուգանք Պայմանագրի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ 20 950 ՀՀ դրամ, սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

 սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

 մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Սույն ծանուցումը Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ **Կարգ**) 33-րդ մասի 17-րդ կետի, ինչպես նաև Պայմանագրի 7-րդ մասի 9-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ Կարգի 33-րդ մասի 17-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**